

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1925 ՏԱՐԵՇԹՁԱՆԻ

Z. F. C. ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՅԻՐԵՒ ՄԱՍՆԱՑԻՒՆԻՆ



Գ. Ա. Հ Ի Բ Ե

1926

ՄՆՊ
-ԳԱՀԻՐԵ-

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՀԻՐԵՒ ՄԱՍՆԱՑԻՒՂԻ

1925, 16^{րդ} ՏԱՐԵՇՐՋԱՆ

Ներկայ Տեղեկագրով Մասնաժողովս ամենամեծ հա-
ճոյքով կը փութայ Միւռութեանս յարգելի անդամ և ան-
դամուհիներուն ներկայացնել, Մասնաժողովս 1925 տարուոյ
տարեկան տեղեկատուութիւնն ու համարատուութիւնը,
որոնք մասնաւոր հաշուեքննիչի միջոցաւ մանրակրկիտ
քննութեամբ հաստատուած և Պատ. Շրջանակ. Յանձնա-
ժողովի կողմէ վաւերացուած են:

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Հ. Բ. Ը. Միւռութեան Գահիրէի Մասնաժողովիս միամ-
եայ պաշտօնավարութեան շրջանը 1925 Մայիս մէկին լրա-
նալով, Ըսդհանուր Կանոնագրի տրամադրութեանց համա-
ձայն Պատ. Շրջանակ. Յանձնաժողովին ներկայացուց իր
հաւաքական հրաժարականը և վիրակազմուեցաւ հետեւ-
եալ կերպով.

Տեղարք Յովհաննէս Սէքսէնեան՝ Ատենապետ
Յովսէփ Սինանեան՝ Փոխ-Ատենապետ
Կարապետ Պագալեան՝ Ատենադպիր
Մարտիրոս Պալաեան՝ Գանձապետ
Բիւզանդ Թէքէնեան
Զարմայր Թէշիշեան
Յակոբճան Պօնճուգեան
Յարութիւն Սրէնճեան
Տօքթ. Ղազարոս Արթինեան }
Խորհրդականներ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐ

1925 տարւոյ ընթացքին Մասնաժողովս ունեցաւ գրեթէ ամէն շաբաթ կանոնաւոր հաւաքոյթներ, որոնցմէ 37 հատը՝ օրինաւոր նիստեր, Մասնաժուղիս բարդաւաճման նուիրուած, բազմազան օրակարգի հարցերով։ Մասնաժողովիս իւրաքանչիւր անդամը անխտիր ամենամեծ շահագրգոռութեամբ հետեւած է իր պաշտօնին կիրարկումին։

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

1925 Ապրիլ 28-ին տեղի ունեցաւ Մասնաժուղիս Անդամական Ընդհանուր ժողովը սիրայօժար մասնակցութեամբ 250 անդամներու, սերկայութեամբ Միութեանս Պատ. Շրջանակ. Յանձնաժողովի, և նախագահութեամբ Գահիրէի երեք հոգեւոր պետերուն։ (Հայ Կաթողիկէ հասարակութեան առաջնորդ՝ Արք. Տ. Յովհանն Եպիսկ. Գուղեան անակնկալ պատճառով մը կը բացակայէր, սակայն հեռազրով կը հաղորդէր թէ սրտով ժողովին հետ էր և կը բարեմազթէր լւագոյն յաջողութիւններ։)

Սոյն ժողովին մէջ կարդացուեցաւ Մասնաժուղիս 1924 տարւոյ տարեկան տեղեկագիրը։ Ատենապետ Տիար Յովհաննէս Սէքսէնեան տոււաւ յաւելուածական տեղեկութիւններ և բարեկործութեան ներբուն ըրաւ տպաւորիչ սբիչով մը։ Գեր. Տ. Թորգոմ Արքեպիսկ. Գուշակեան և Վեր. Հ. Խանզամուր իրենց կարգին բերին իրենց կուռ ու ներգործիչ խօսքերը և օրուան պատշաճ յորդորներով իրավուսեցին ներկաները դէպի մեծ նպատակը Բարեգործական Միութեանս։

ԱՆԴԱՄԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

1925 տարւոյ սկիզբը ունէինք 1174 անդամներ որոնք պիտի ապահովէին մեզ 16729.75 Ե.Դ. ի ամսական կանոնաւոր հասոյթ մը, սակայն անակնկալ և այլ զանազան պատճառներ — մահեր, մեկնումներ, ինչպէս նաեւ գործերու անյաջողութեան պատճառաւ հրաժարումներ — տարուան ընթացքին վերոգրեալ անդամներէն պակսեցու-

ցին 171 հոգի, Ե.Դ. 1373 ամսավճարով, այնպէս որ 1925 տարւոյ վախճանին Մասնաճիւղս պիտի ունենար անոնցմէ միայն 1003 անդամներ Ե.Դ. 15356 ամսավճարով:

Արդ Մասնաճիւղիս համար անխուսափելի գարձած այս կորուստին դէմ. Մասնաժողովս գերագոյն ճիշերով աշխատեցաւ իր կարելին ընել նոր անդամագրութեանց համար:

Այսպէս, տարուան ընթացքին չնորհիւ Մասնաճիւղիս նոր Գործիչ-Պատուիրակ, Վ.Ի. Հ. Խանդամուրի միջոցաւ ստեղծուած նոր անդամագրական շարժումին՝ ունեցանք 271 նոր անդամներ, Ե.Դ. 3432 Մուտք, 2496 ամսավճարով: Այս թիւին մէջ չենք հաշուեր տակաւին Մասնաճիւղիս այն անդամները, որոնք այս շրջանին հրաժարեցան և վերստին անդամագրուեցան, որոնց թիւը կը հասնի հարիւրի:

Մեր այս նոր անդամագրութիւններէն եւս ունեցանք, մահուան, մեկնումի և այլ պատճառով պակսող 12 անդամներ, 65 Ե.Դ. ամսավճարով, այնպէս որ 1925-ի վախճանին՝ անոնցմէ մուացին 259 անդամներ, Ե.Դ. 2431 ամսավճարով:

Այս կերպով 1926 տարւոյ փոխանցեցինք հին ու նոր բազիր, համագումար 1262 անդամներ Ե.Դ. 17787 ամսավճարով, ունենալով 88 նոր անդամներու յաւելում մը նախորդ տարեշրջանին վրայ:

Ս.սկէ զատ 1925-ին 15 անդամներ սիրայօժար յանձն առին յաւելումներ կատարել իրենց ամսավճարներուն վրայ, ապահովելով Ե.Դ. 108-ի յաւելուածական հասոյթ մը, մինչ միւս կողմէն 47 անդամներ տնտեսական տագնապի ու գործի անյաջողութեանց պատճառաւ առաջարկեցին ամսավճարի նուազումներ, որոնց գումարը կը հասնի Ե.Դ. 405-ի:

ՕԺԱՆԴԱԿ Մ.Ա.Ս.Ա.ԺՈՂՈՎՆԵՐ և ՆԵՐԿԱՅԱՅԱՑՈՒՅՆԵՐ

Ինչպէս նախորդ տարւոյ Ընդհանուր ժողովի մէջ տեղեկագրած էինք, Մասնաճիւղիս մաս կը կազմեն վերին և ստորին Եգիպտոսի կարգ մը քաղաքներու Միութեանս անդամները որոնց գանձումները կը կատարուին Ենթամասնաժողովներու և ներկայացուցիչներու միջոցաւ:

Այսպէս այսօր ունինք 4 տարբեր քաղաքներու մէջ

Օժանդակ Մասնաժողովներ, 24 հատ ներկայացուցիչներ, և
8 զանազան քաղաքներու մէջ ալ քանի մը անդամներ,
որոնք կանոնաւոր ու շարունակական թղթակցութեամբ
կապուած կը մնան ուղղակի Մասնաժողովիս, և որոնք կը
ներկայացնեն 300-է աւելի անդամներ, մօտ 45 եգիպտ.
ուկի ամսավճարով։ Մասնաժողովս ուծացումներու առաջքը
առնելու և անդամներն ու համակիրները քաջալերելու
նպատակաւ կարգադրած է որ տարուան մէջ գէթ մի ան-
գամ Մասնաժուղիս Դործիչը այցելութիւններ տայ յիշեալ
վայրերը։ Այսպէս տարւոյ մէջ երեք անդամ մասնաւոր
առաքելութիւններ եղած են վերին ու ստորին եգիպտոսի
քաղաքները, յաջող արդիւնաւորութեամբ մը։

Աւելորդ չենք նկատեր հազորդել նաեւ թէ սոյն 36
տարբեր վայրերու հաշիւներն ու ընկալազիրներու պատ-
րաստութիւնները կը կատարուին Մասնաժողովիս գրասեն-
եակին միջոցաւ։

ԵԼԵՒՄՈՒՏՔԻ

Մասնաժուղիս 1925 տարւոյ Ելեւմուտքի հաշիւն է. —

ՄՈՒՏՔԻ	Եզ. Ասկի	ԵԼՔԻ	Եզ. Ասկի
Մուտքի տուրք	33.5	Կեդրոն յանձնուած	2471.5
Անդամավճար	1625.	Մասնաժուղի	
Նուեր յօգուա որբերու	344.	տարեկան ծախը	387.5
Որբի Կիրակի	585.		
(1924 և 1925 տարիներու)			
Առատնին Գանձանակներ	22.5		
Որբի պաշտպանուրիւն	40.5		
Հերեան Ֆօնտի հանգ.	18.5		
Պատի Օրացոյցներ	124.		
«Միուրին» թէրք	42.5		
Զանազան հասոյքներ	23.5		
	2859.		2859.

ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐ

1925 տարւոյ անդամատուրքերէ զոյացած տարեկան
գումարը եղած է 1625 եգիպտական ոսկի։ Նկատի ունենա-
լով անցեալ տարուան վրայ այս տարուան կարդ մը բացա-

ոիկ ու մեծագումար վճարումներու նուազումէն յառաջ եկած տարբերութիւնը , ներկայ տարւոյ ընթացքին Մասնածիւղիս ուղղակի Գահիրէ և շրջականերէն գոյացուցած հասոյթը կը գերազանցէ ամբողջ նախորդ տարիներունը , 1924 տարիէն 113 Եգիպ . ուսկի աւելի և 1923-էն 119 Եգ . ուսկի :

ՆՈՒԻՐԱԾՈՒԹԻՒԹԻՒՆՆԵՐ

Նուիրատուութեան տեսակէտէ եւս բոլորեցինք խիստ յաջող տարեշրջան մը , 175 Եգիպտ . Ուսկի աւելի քան նախորդ տարուանը :

Նուիրատուութեանց մէջ մեր ունեցած այս յաջողութիւնը կը պարտինք առաւելապէս այդ ուղղութեամբ կատարուած մասնաւոր բրոբականութիւնն և նաևմանաւանդ մեր կողմէ խիստ կանոնաւորութեամբ և ճշգապահութեամբ կիրարկուած քարթերու գրութեան որ ժողովուրդի կողմէն հետդինատէ որոշակի հասկցուելով անոր մասնաւոր գնահատութեան արժանայած է :

Յուսով ենք թէ չնորհիւ Մասնաժողովիս այս յառաջիկայ տարուան համար ունեցած մասնաւոր առաջադրութիւններուն , հասոյթներու այս աղբիւրը կարելի պիտի ըլլայ մեծապէս ճոխացնել :

ՈՐԲԵՐՈՈՒ ԿԻՐԱԿԻ «ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՀԻՒՐ»Ը

1925-ի վերջնիմէր ամսուն Միութեանս Պատ . Շրջ . Յանձնաժողովի կողմանէ Մասնաժողովս այս տարի եւս , նման անցեալ տարուան , հրաւիրուեցաւ ստանձնել ու գլուխ կանգնիլ , Գահիրէի և շրջականերուն մէջ «Անտեսանելի Հիւր»ին ի նպաստ կատարուելիք հանգանակութեան գործին :

Հակառակ տնտեսական ոչ նպաստաւոր պայմաններուն և մասնաւորաբար այդ ժամանակաշրջանին զուգազիւպող զանազան հանգանակութիւններուն պատճառաւ ժողովուրդի յոգնած տրամադրութեան , ուրախ ենք յայտնելու որ Մասնածիւղիս ապահովուեցաւ 56702.2 Ե . Դ . Ի . հասոյթ մը որ կը ներկայացնէ 15 Եգիպտ . Ուսկի տարբերութիւն մը միայն նախորդ տարուանին վրայ . Մեր այս յաջողութեան

մէջ կարեւոր բաժին մը ունին անտարակոյս Միութեանս անդամներն ու համակիրները, ինչպէս նաեւ ամէն անօնք, որոնք իրենց հանգիստն ու ժամանակը զոհելով ազնուօրէն ամեն ջանք նուիրեցին ձեռնարկը իր նպատակին համապատասխան արդիւնաւորութեամբ պատկելու համար։ Այս տարի Որբերու կիրակին մասնակցած են մեծ ու փոքր 5000 ազգայիններ։ Անցեալ տարի մասնակցողներու թիւն էր 4000։

ԱՌՏՆԻՆ ԳԱՆՉԱՆԱԿՆԵՐ

1925-ի հաշուեկշռէն կը տեսնուի որ ներկայ տարւոյ մէջ Մասնաճիւղս ունեցած է 2226.2 ե. Դ. ի բացառիկ հասոյթ մը Առանին Գանձանակներէն։

Մասնաժողովս իրեն եղած մասնաւոր առաջարկութեան մը վրայ, 1925 Մեպտ. ամսուն յարմար տեսնելով ծրագրեց Մասնաճիւղիս Առանին Գանձանակները տեղաւորել նաեւ գպրոցներու մէջ, իւրաքանչիւրը Միութեանս որբերէն միոյն անունով, որով ամեն մէկ գանձանակ ստացող վարժարան անկէ գոյացած առաւել կամ նուազ հասոյթի միջոցաւ ստանձնած պիտի ըլլայ որբ կամ որբուհի մը պաշտպանութիւնը։

Այս նպատակաւ արդէն գանձանակներ տեղաւորուած են Ազգ. Գալուստեան—Նուպարեան, Մանիսալեան, Թաշճան և Պէրպէրեան վարժարաններուն մէջ։

Այսպէս չնորհիւ գանձանակներու տեղաւորման մասին Մասնաժողովիս կողմէ եղած բրոբականտին և չնորհիւ մասնաւորավովս վերոգրեալ վերջին կարգագրութեան, ապահովարար կը յուսանք թէ յառաջիկայ տարուան մէջ գանձանակները պիտի ըլլան Մասնաճիւղիս նոր ու կարեւոր հասոյթի աղբիւրներէն մին։

ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑՆԵՐ

Մասնաժողովս իր կարելին ըրաւ սպառելու համար թէ 1924 տարիէն մեր մօտ վաճառելի մնացած 161 եգ. Ոսկի արժողութեամբ և թէ 1925-ի վերջին ամսուն Մասնաժողովիս տրամադրուած 100 եգ. Ոսկի 1926-ի յատուկ Միութեանս օրացոյցները։ Այսպէս յաջողուած է մեզ անոնցմէ գոյացնել մօտ 124 ոսկիի նշանակելի գումար մը։

«ՌՈՒԲԵՆ ՀԵՐԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ՖՈՆԾ»

Միութեանս Պատ . Շրջան . Յանձնաժողովը որոշած ըլլալով հանգուցեալ Ռուբէն Հերեանի հողակոյտին վրայ , ի Մարմինա , կանգնել յուշարձան մը , ընդհանուր յայտարարութեամբ և մասնաւոր նամակով պաշտօն տուաւ մեզ որ ձեռնարկենք հանգանակութեան մը . «Ռուբէն Հերեան Յուշարձանի Փօնտ» անունով , որպէսզի այս կերպով կարելի ըլլայ ազգովին հատուցանել երախտագիտութեան պարտք մը մեծանուն որբախոյզին :

Ժողովս ծրագրեց մասնաւոր կարգադրութեամբ և ժապաւինեալ տետրակներու միջոցաւ կատարել սոյն հանգանակութիւնը : Մինչեւ 31 Դեկտ . գոյացած հասոյթն է 1845 ե . Դ . Ք . ի համեստ գումար մը : Ժողովս տակաւին կը ջանայ իր կարելին ընել աւելցնելու համար սոյն գումարը :

ԲՐՈՒԲԱԿԱՆԾ ԵԽ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ,

Ինչպէս նախորդ տեղեկագրով և այլ զանազան առիթներով պատեհութիւնը ունեցած ենք կրկնելու , Մասնաժողովս որոշապէս զիտակցած է որ Մասնաճիւղերու գործունէութեան առանցքը և անոնց հասոյթներու հիմնական ու կենսական ազրիւրը կը կազմեն անդամատուրքերն ու նուէրները և թէ անոնց ինչպէս նաեւ այլ հասոյթներու յաջողապէս արդիւնաւորումը կախում ունի նորանոր անդամագրութիւններէն և մասնաւորաբար գրաւոր թէ բերանացի բրոբականտէն , հետեւաբար Ժողովս մշտապէս իր խորհրդածութեան գլխաւոր նիւթը ըրած է այս պարագան , մանաւանդ երբ նկատի ունենանք որ այս որքան նուիրական , նոյնքան ծանրատար ու գժուարին պարտականութիւնը ի գլուխ հանելու համար Մասնաճիւղիս շրջանակը կը ներկայանայ չափազանց ընդարձակ , կարեւոր և գժուարամշակելի գործունէութեան զաշտ մը :

Այս իսկ պատճառաւ էր որ Մասնաճիւղիս նախորդ գործիչ Տ . Յարութիւն Մերտինեանի հրաժարումին առթիւ , Ժողովս անցեալ երկու տարիներուն յաջողութեամբ սկսուած

անդամագրական շարժումը և կազմակերպական աշխատութիւնները աւելի ուժեղ թափով շարունակելու և գերազայն ճիգերով ներկայ անդամներու թիւը բազմապատկելու առաջադրութեամբ, ինչպէս նաև ազգու դիմումներով զանազան նուիրատուութիւններ ապահովելու մտադրութեամբ փութաց Պատ. Շրջանակ. Յանձնաժողովի հաւանութեամբ Օգոստոս ամսոյ կիսուն, Մասնածիւղիս գործիչի պաշտօնին կոչել, Վեր. Հ. Խանդամուրը, այն հաստատ համոզումով որ յանձին յիշեալին, Մասնածիւղս պիտի ունենայ լաւագոյն գործիչը, որ պիտի կարողանայ արժեցնել իր պաշտօնը նիւթապէս թէ բարոյապէս:

Երգէն Յունիս ամիսէն սկսեալ քանի մը ամիս տեւողութեամբ կազմակերպած էինք անդամագրական արշաւանք մը, որ պիտի ըլլար Մասնածիւղիս անդամներուն միջոցաւ, Մասնաւոր նամակ կոչերով հրաւիրեցինք իւրաքանչիւր անդամը, որ իր մասնակցութեան բաժինը բերէ անդամագրելով սոսկ մէկ անդամ իր ընտանեկան յարկէն, ազգականներէն, բարեկամներէն կամ ծանօթներէն: Մասնաժողովիս նպատակն էր այս կերպով պատեհութիւն մը ստեղծել մանաւանդ իգական սեռի, մանուկներու և երիտասարդներու անդամագրութեան: Որքան որ այս վերջին փորձով քանի մը տասնեակ նոր անդամներ ունեցանք, սակայն փութանք աւելցնել թէ Մասնաժողովս կ'ակնկալէր շատ աւելի փայլուն արդիւնք մը, նկատի ունենալով Մասնածիւղիս անդամներուն թիւն ու բարեացակամութիւնը:

Միւս կողմէ սակայն Ապրիլ, Մայիս և Հոկտ. ամիսներուն, Մասնածիւղիս Գործիչի կողմանէ, կատարուած վերին ու ստորին Եգիպտոսի կազմակերպական ու անդամագրական առաքելութիւնները, ինչպէս նաև Վեր. Հ. Խանդամուրի կարճ ժամանակի մէջ ի յայտ բերած գործունէութիւնն ու ստեղծած շարժումը, կրնանք ըսել թէ մասամբ արդարացուցին մեր ունեցած յոյսերը, իրականացնելով Մասնաժողովիս նախորդ տարւոյ համարատուութեամբ ըրած նախատեսութիւնները:

Ներկայիս բարեբաղզ ենք մասնաւոր գոհունակութեամբ հաստատելու թէ Մասնաճիւզս ներկայ տարեցանին մէջ անդամներուն բիւի և սեփական հասոյթներուն կողմանէ կուտայ առաւելագոյն արդիւնքը որուն երբեք հասած չէ իր կազմութեան թուականէն ի վեր։ Պէտք է խոստովանիլ թէ այս գեղեցիկ արդիւնքը, համեստ արգասիքն է Մասնաժողովիս ի գործ զրած կորովի ջանքերուն և կազմակերպեալ աշխատանքին, երբ մանաւանդ նկատի ունենանք տարեցանին հրապարակը ճնշող աննախընթաց տնտեսական տագնապը և զանազան ձեռնարկներն ու ֆօնտերը, որոնք տեղն է ըսել որ մեծապէս դժուարացուցին Մասնաժողովիս հետապնդած անդամագրական ընդարձակ ծրագրին շատ աւելի փայլուն յաջողութեամբ իրագործումը։

Սոյն Տեղեկագիրը վերջացնելէ առաջ պարտք կ'զգանք մեր անկեղծ չնորհակալութիւնները յայտնել Պատ. Երջանակային Յանձնաժողովին որ իր լայն վստահութեամբ և քաջալիրանքով մեծագոյն զօրավիզը եղած է Մասնաժողովիս ամեն կարգի ձեռնարկներու մէջ, ինչպէս նաև Մասնաժողութեամբ այն բոլոր անդամ և անդամունքներուն որոնք չբաւականացան միայն իրենց ստանձնած անդամական յանձնառութիւնները կատարելով, այլ գովելի հայրենասիրութեամբ ընդ առաջ գացին և նիւթապէս թէ բարոյապէս օժանդակեցին մասնաւորապէս Մասնաժողովիս և ընդհանրապէս Միութեամս ծրագրած ամեն կարգի ձեռնարկներուն յաջողապէս արդիւնաւորման։

Ի դիմաց Հ. Բ. Բ. Միութեամս

Գահիրէի Մասնաժողովի

Ատենադպիր

Ատենապիտ

Կ. ՊԱԴԱԼԵԱՆ ՅՈՎՀ. Մ. ՍԵՐՍԼԵԱՆ

ԾԱՆՈԹ. — Յառաջիկայ Մայիս 9-ին առաջադրուած ըլլալով հանդեսով մը տօնել Միութեամս հիմնարկութեան ՔՍԱՆԱՄԵԱԿը, այս տարի Անդամական Ընդհանուր Ժաղովը զանց առնուած է։

Հ. Բ. Ը ՄԻՈՒԹԵԱՆ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արարատեան եւ Վասպուրական որբանոցներ՝	Նրուսաղեմ
Քէլէկեան-Սխառան Որբանոց	Պէյրուր
Պատսպարան-Աշխատանոց ջափահաս որբութիներուն	Պէյրուր
Պատսպարան կանանց	Հայեպ
Աշխատանոցներ աղջկանց եւ կանանց	Արենք եւ Սելամիկ
Դարմանատուններ	Արենք, Բիրեա եւ Միտիլի
Կայաններ ջափահաս որբերուն եւ որբութիներուն	Հայեպ
Դադրատուն եւ Ապուրի տուն	Հայեպ
Նուպարեան վարժարան	Ալեքսանդրեր

ՆՊԱՍՏԸՆԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազգային վարժարաններ՝ Դամակոս, Զանկ, Հոմս (Սուրբիա),
Սրբա Զակօրա (Պուլկարիա)

Գաղրականաց վարժարաններ՝ Տրիպոլիս, Սայտա, Ղազիր, Պէյ-
րուր (4 հատ), Ճիւնկ, Պայ, Մունպուն, Բարրա,
Ճարագույոս (Սուրբիա), Գալամարա-Բարաբեզմարա,
Ֆիրս, Քօքինիա, Սինկրու, Լիբազմա (Յունաստան):

Հայ-Աւետարանական վարժարաններ՝ Զանկ, Դամակոս, Պէյ-
րուր, Հայեպ: — Հայ Ռևուց. Միուրեան վարժարան՝ Միտիլի: —
Քեմբի Ռևումնասիրաց վարժարան, Քեմբի Մեսրոպեան վարժարան,
Քեմբի Հայ Աւետ. վարժարան, Քեմբի Աւրեացիներուն վարժարան,
Այնրապի Կրր. Միուրեան վարժարան, Խարբերդցիներուն վարժա-
րան՝ Հայեպ: — Հայ բորախտառիներուն հիւանդանոց՝ Պէյրուր:

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

- 1) Հիւանդանոց-Մայրանոց Գ. Յակոբեան
- 2) Նոր Եւդոկիա գիւղ
- 3) «Աւետ. Սարգս» գիւղ
- 4) Շեն Գաւիթի որբանոց
- 5) Ուշպագ վարժարան

ՀԱՅՑԻ. — CONSEIL LOCAL

DE L'UNION GÉNÉRALE ARMÉNIENNE DE BIENFAISANCE

B.P. 1079 - TÉL. 3605

LE CAIRE